գալուն՝ Յոպպէի առջև ծովը կ'իյնայ քովը գտնուած ձեռագիր Աւետարանին հետ, բայց կ'ազատուի և անունը կը դրուի Ծովածին։ Շղթայակիրի վերջին աշակերտներէն էր և անոր վերջին տարիներուն կ'ընտրուի Ա. Եգիպտոսի. կը ձեռնադրուի եպս. 1762ին. և նե. Տիգրանակերտի. Փկե. (1764-1775). Պե. (1775-*1793). 1792ին կը թղթակցի Վրաց Հերակլ Բ. կայսեր հետ (Սաւաշան. էջ 961-972)։ Յովակիմ պտրք. իր ծախքով 1787ին Պոլսի մէջ տպագրել կուտայ Ս. պատարագի Խորհրդատետրը. իր տապանագիրը՝ հետևեալն է՝ զոր ինք գրած է.

«Այս է տապան հանգստեան
Յորժամ յայտնի նշան տէրունեան.
Զի մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ.
Որ եմ ի ներքոյ վիմիս թաքուցեալ
Յովակիմ պատրիարգ յորջորջեալ
Եւ Ծովածին կոչեցեալ.
Զեռամբ իմով չարագրեալ.
Առ Տէր Յիսուս գընացեալ.
Ի թուին ՌՄԽԲ (=1793), և Սեպ. Իե»։

ՅՈՎԱԿԻՄ ՎՐԴ.— Մբ. ՄՁ. Թ. 23 ձեռագիրին յիշատակարանին համաձայն Յովակիմ վրդ. 1743ին տեսուչ կարգուած է Ռամլէի վանքին։ Յիշատակարանն է հետևեալը. «Ես մեղապարտ Յովակիմ վրդ. եկի այս Ս. Դէորգայ ամենագեղեցիկ վանքս առաջնորդ յոհիզ հրամանաւ Սրբազան վեհին մերոյ Տեառն Յակոբայ իմաստնազարդ և գերընտիր պատրիարքին. թվին ՌՃՂԲ (=1743) ամին, ապրիլի ի. օրն». (Խապ. Ցուց. էջ 15)։

ՅՈՎԱԿԻՄ ՎՐԴ.— Մբ. 1793ին ՏՑ.։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ.— Մբ. 1215ին Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Ճառընտիր մը. Յովհաննէս ճգնաւորին համար. նոյն ձեռագրիին յիշատակարանին կարևոր մասերը կ'ընդօրինակենք հոս. «Յամի վեց հարիւրորդի վաթսներորդի եւ չորորդի ամի շրջաբերութեան հայոց տումարի (=1215) եւ ի թագաւորութեան հայոց Լեւոնի, ի վերջացեալ և ի նըուազեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննէսի Հայոց կաթողիկոսի. յաշխարհս Պա-